ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____»_____ 2017թ. N_____

ՈՐՈՇՈՒՄ

ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի Անաստաս Միկոյանի (Երևան-Եղվարդի խճուղին՝ սկսած Դավիթաշենի կամրջից մինչև Դավիթաշեն համայնքի վարչական տարածքի վերջը) փողոցն անվանափոխել հայ մեծ բարերար Քըրք Քըրքորյանի անվամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝ Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քըրք Քըրքորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում Երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քըրք Քըրքորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդային Միության փլուզումից հետո դրա կազմի մեջ մտնող գրեթե բոլոր հանրապետություններում տեղի ունեցան արժեհամակարգային փոփոխություններ: Վերարժևորվեցին պատմական և քաղաքական իրադարձությունները, «հերոսների» ու «հակահերոսների» դերն ու նշանակությունը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին անկախություն ձեռք բերելուց հետո սկսվեց մի գործընթաց, որը նպատակ ուներ ազատվելու բոլշևիկյան ժամանակահատվածի «հերոսների» անուններով տեղանուններից, որոնք բացասական ազդեցություն են ունեցել Հայաստանի պետականության վրա, ակտիվորեն մասնակցել են ապազգային, հակապետական գործունեության՝ նպաստելով Հայաստանի առաջին անկախ պետության տապալմանը:

Ցավով պետք է նշենք, որ այս գործընթացը կիսատ է մնացել և անհրաժեշտություն կա այն հասցնել տրամաբանական ավարտին: Ավելին, վերջին շրջանում նկատվում է անցյալում ապազգային և հակապետական գործունեությամբ աչքի ընկած գործիչներին արդարացնելու, նրանց անունով փողոցներ կոչելու, նոր հուշարձաններ տեղադրելու ուղղությամբ: Ավելին, ամբողջ աշխարհում վաղուց սկսվել է ստալինյան բռնաճնշումների ժամանակահատվածի դատապարտման գործընթաց, որն ինքնին պետք է բացառի տվյալ ժամանակահատվածում ապազգային գործունեությամբ աչքի ընկած պետական պաշտոններ զբաղեցրածների անուններով փողոցների, դպրոցների, հրապարակների անվանակոչությունը:

Սույն նախագծով առաջարկում ենք վերանվանել Անաստաս Միկոյանի անունը կրող փողոցը հայ մեծ բարերար, Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Քըրք Քըրքորյանի անունով:

Անաստաս Միկոյանը համարվում է բոլշևիկյան-ստալինյան ժամանակաշրջանի վարչախմբի ամենակարկառուն դեմքերից մեկը, ով աչքի է ընկել Հայաստանի Հանրապետության և հայ ազգի դեմ գործած հանցագործություններով, որոնք փաստագրված են և կասկածներ չեն կարող հարուցել:

Մասնավորապես, Անաստաս Միկոյանն անմիջական մասնակցություն է ունեցել Հայաստանի առաջին հանրապետության կազմալուծման, 1910-ականների վերջում և 1920-ականների սկզբին ջանքեր չի խնայել՝ Խորհրդային Ռուսաստանին առաջարկելով Լեռնային Ղարաբաղն, ինչպես նաև Զանգեզուրը ներառել Ադրբեջանի կազմում:

Սույն նախագծին կից «Հավելված 1»-ում Բոլշևիկյան Ռուսաստանի առաջնորդ Վլադիմիր Լենինին ուղղված զեկույցում Անաստաս Միկոյանը պնդում է, որ «Թուրքահայաստանի և, ընդհանրապես, «Մեծ, միասնական և անկախ Հայաստանի» գաղափարները վնասակար, հանցավոր և ռեակցիոն են, որի դեմ պետք է պայքարի մեր կուսակցությունը»: Սույն փաստաթղթում Միկոյանը բազմաթիվ «փաստարկներով» հիմնավորում է Հայկական հարցի տապալման անհրաժեշտությունը, Հայաստանի անկախ պետության հնարավորությունների սահմանափակումը Թուրքիայի դեմ պայքարում:

Հենց այդ ժամանակահատվածում Միկոյանը հետևողականորեն հեռագրեր է ուղարկում Մոսկվա՝ տարբեր կերպ պահանջելով Ղարաբաղն ու Զանգեզուրը կցել Ադրբեջանին: Նարիմանովի, Մդիվանիի, Անաստաս Միկոյանի, Ավիս Նուրիջանյանի (Телеграмма Н.Нариманова, М.Мдивани, А.Микояна, А.Нуриджаняна Г.Чичерину. 19.06.1920) համատեղ նամակում նշվում է՝ «Հայերը Ադրբեջանի հետ փաստացի պատերազմական հարաբերությունների մեջ են: Ինչ վերաբերում է արդեն Սովետական Ադրբեջանի մեջ մտած իբրև թե վիճարկելի Զանգեզուրին ու Ղարաբաղին, ապա կատեգորիկ հայտարարում ենք, որ այդ տարածքներն անառարկելիորեն և այսուհետև պետք է գտնվեն Ադրբեջանի սահմաններում: Սույն փաստաթուղթը լայնորեն օգտագործվում է Ադրբեջանի

քարոզչամեքենայի կողմից՝ հատուկ նշելով, որ «Մեծն Միկոյանն է արտոնել Արցախի բռնազավթումն Ադրբեջանի կողմից» (Джамиль Гасанлы: Нагорный Карабах: старые заблуждения в новой интерпретации; http://www.regnum.ru/news/1428880.html):

Մեկ այլ փաստաթղթում Միկոյանը գործընկերների հետ հիմնավորում է, որ Արցախն ու Զանգեզուրը սերտորեն կապված են Բաքվի հետ, և այդ կարգավիճակը պետք է պահպանվի: «Մեր պարտքն ենք համարում Զանգեզուրի և Ղարաբաղի կապակցությամբ ԿԿ-ին տեղեկացնել մեր միասնական կարծիքը: Հայաստանի հետ այդ հարցի քննարկման մեջ զգացվում է Կովկասում հեղափոխության դեմ ընթացող միջանկյալ լուծում: Ղարաբաղը մուսավաթականների ժամանակաշրջանում ամբողջովին Ադրբեջանի մեջ էր: Ղարաբաղի և Զանգեզուրի մշակութային ու տնտեսական անխզելի կապերը Բաքվի հետ, որը սնվում է այդ գավառների տասնյակ հազարավոր բանվորներով, և Երևանից դրանց ամբողջական խզվածությունը լիովին ապացուցվել է Ղարաբաղի հայության 1919 թ. համագումարով, որը հայերի համար անտանելի մուսավաթական ռեժիմի և Հայաստանի ագենտների քարոզչության պայմաններում վճռականորեն արտահայտվել է Ադրբեջանի հետ լիակատար միասնականության օգտին՝ հայերի խաղաղ կյանքի երաշխիքներով» (Письмо Нариманова, Мдивани, Микояна, Нанейшвили, Весника, Левандовского и Михайлова в ЦК РКП(б). 10.07.1920 // АПД УДП АР, ф.1, оп.44, д.118, л.25-27):

Միկոյանին սա բավարար չէր: 1920 թ. հուլիսի 29-ին միայն իր ստորագրությամբ ևս մի հեռագիր է ուղարկել Օրջոնիկիձեին. «Ղարաբաղի և Զանգեզուրի հարցով մենք զայրացած ենք Կենտրոնի քաղաքականությամբ: Դու նույնպես պնդիր Կենտրոնում մեր տեսակետը: Մենք դեմ չենք Հայաստանի հետ խաղաղությանը, բայց ոչ մի դեպքում Ղարաբաղի ու Զանգեզուրի գնով» (փաստաթուղթը գնվում է Սոցիալ-քաղաքական պատմության ռուսաստանյան պետական արխիվում՝ Телеграмма А.Микояна Г.Орджоникидзе. 29.06.1920 // РГАСПИ, ф.64, оп.1, д.17, л.134):

Միկոյանն ու գործընկերների գործողություններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության այնքան ինտենսիվ են եղել, Հայաստանից՝ հօգուտ Ադրբեջանի հողեր բռնազավթելու քաղաքականության համատեքստում, որ Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը Մոսկվային կոչ է արել զսպել Միկոյանին և կովկասյան մյուս գործիչներին, քանի որ դա կազմալուծում է Հայաստանի Հանրապետությունը և թույլ չի տալիս համաձայնության գալ Հայաստանի Հանրապետության հետ (տե՛ս կից Հավելված 2):

Միկոյանն ու Ադրբեջանի բոլշևիկներն շտապում էին դեպքերն արագացնել, որովհետև ընթացքի մեջ էր Սևրի պայմանագիրը (այն ստորագրվեց 1920 թ. օգոստոսի 10-ին) և նրանք ուզում էին օր առաջ լուծել Ղարաբաղի և Զանգեզուրի հարցը՝ փաստի առաջ կանգնեցնելով Սևրի պայմանագրի վրա աշխատողներին: Միկոյանը նրանց ջանասեր օգնականն էր՝ նա ապահովում էր հայկական «համաձայնողականությունը»: Փաստաթղթում Միկոյանն ու գործընկերները համոզում են Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինին, որ Լեռնային Ղարաբաղը կցվի Ադրբեջանին, քանի որ «Ադրբեջանի մուսուլմանական բնակչությունն արոտավայրերի կարիք ունի» (**տե՛ս կից Հավելված** 3):

Հայաստանի առաջին հանրապետությունը տապալելուց հետո Միկոյանը շարունակել է իր հակահայկական գործունեությունն արդեն հաստատված խորհրդային կարգերի ժամանակ: Մասնավորապես հրապարակված են նրա ստորագրությամբ փաստաթղթեր, որոնք վկայում են այն մասին, որ ստալինյան վարչակարգի մի շարք ներկայացուցիչների հետ միասին Միկոյանն արտոնել է հազարավոր հայերի բռնաճնշումը և արտաքսումը հայրենիքից (**տե՛ս կից Հավելված** 5): Բացի այդ, Միկոյանի միջնորդությամբ Ներքին գործերի ժողովրդական կոմիսար Եժովը միջնորդագիր է ներկայացրել Ստալինին Հայաստանում գնդակահարվողների թիվը 700-ով մեծացնելու համար (**տե՛ս կից Հավելված** 4):

Միկոյանի կողմից մարդկության դեմ գործած հանցանքներին ավելանում է նաև Կատինում լեհ հազարավոր սպաների բնաջնջման հանցանքը: Ըստ հրապարակված արխիվային մի փաստաթղթի, որը գտնվում Սոցիալ-քաղաքական պատմության ռուսաստանյան պետական

արխիվում, Միկոյանը կողմ է արտահայտվել լեհ սպաների գնդակահարությանը և բնաջնջմանը, ինչը միջազգային ատյանների կողմից հաստատված հանցանք է ստալինյան ռեժիմի կողմից (**տե՛ս կից Հավելված** 6):

Հաշվի առնելով վերոգրյալ անժխտելի փաստերը՝ առաջարկում ենք Անաստաս Միկոյանի փողոցը վերանվանել Քըրք Քըրքորյանի անունով:

Քըրք Քըրքորյանը հայ մեծ բարերար է, որն արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչմանը, ստացել ՀՀ քաղաքացիություն: Քըրք Քըրքորյանի՝ 1998 թվականին ստեղծած «Լինսի» բարեգործական հիմնադրամի միջոցով Հայաստանում իրականացվել է շուրջ 220 միլիոն դոլարի նվիրատվություն:

Մոտավորապես 45 միլիոն դոլլար հատկացվել է Շիրակի և Լոռու մարզերում 1988 թվականի երկրաշարժի հետևանքով ավերված բնակելի ֆոնդի վերականգնմանը: Կառուցվել է 149 բնակելի շենք: Վերականգնվել է 34 մշակութային հաստատություն՝ 13 թատրոն ու համերգասրահ, 7 թանգարան, 9 տուն-թանգարան, 4 պատմամշակութային համալիր և Ծաղկաձորի համահայկական մարզական երիտասարդական ճամբարը:

Հիմնովին նորոգվել են Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահը և Ֆիլհարմոնիայի փոքր համերգասրահը: Վերանորոգվել է Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը, Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային, Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և Մհեր Մկրտչյանի արտիստական թատրոնը, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը:

«Լինսի» հիմնադրամի միջոցով վերանորոգվել են նաև Մատենադարանը, Հայաստանի ազգային պատկերասրահը, Պատմության պետական թանգարանը, Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանը, Ժամանակակից արվեստի թանգարանը, Ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարանը, Սերգեյ Փարաջանովի, Երվանդ Քոչարի, Մինասի, Հովհաննես Թումանյանի, Մարտիրոս Սարյանի, Եղիշե Չարենցի թանգարանները: Վերանորոգման աշխատանքներ են կատարվել նաև Գառնիի և Զվարթնոցի պատմաճարտարապետական համալիրներում, Ծիծեռնակաբերդի ցեղասպանության զոհերի հուշահամալիրում:

Գյումրիում վերանորոգվել է Գյումրիի Ասլամազյան քույրերի տուն-թանգարանը: Ամբողջովին նորոգվել և կահավորվել է Գյումրու Վարդան Աճեմյանի թատրոնի դահլիճը: Վանաձորում ևս իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ Մշակույթի պալատում:

«Լինսի» հիմադրամի Հայաստանին տրամադրած 150 միլիոն դոլարից 71 միլիոն 400 հազարը հատկացվել է ճանապարհաշինությանը: Կառուցվել է շուրջ 435 կմ ճանապարհ:

Բարերարի շնորհիվ կառուցվել է Սևան-Դիլիջան թունելը և Եղեգնաձոր-Մարտունի 58 կմ ավտոճանապարհը: Վերակառուցվել է Սպիտակ-Գյումրի ավտոճանապարհի 6-րդ կիլոմետրում գտնվող թունելը, Երևան-Արարատ 34 կմ հատվածը, Տիգրանաշեն-Զանգակատուն 13 կմ հատվածը, Երևան-Իջևան-Նոյեմբերյան-Այրում ավտոմայրուղին, Երևանից Սևան՝ 63 կմ, Սևանից Դիլիջան՝ 21 կմ, Դիլիջանից Իջևան՝ 47 կմ, Իջևանից Այրում՝ 58 կմ հատվածները: Վերակառուցվել է Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհը, որը միանում է Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն մայրուղուն: Նորոգվել է Սևան-Մարտունի 64 կմ ավտոճանապարհը, որը միանալով Սելիմի լեռնանցքով անցնող Եղեգնաձոր-Մարտունի ճանապարհին, միջանկյալ կապ է ստեղծում հանրապետության երկու գլխավոր միջպետական ՝ Երևան-Իջևան և Երևան-Մեղրի մայրուղիների միջև: Նորոգվել է նաև Երևան-Սևան մայրուղին Ծաղկաձորի հանգստյան գոտուն կապող 10 կիլոմետրանոց ճանապարհը: Հիմնովին նորոգվել է Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի վթարային հատվածը Քոբեր կայարանի մերձակայքում: Կառուցվել են երկու կամրջային անցումներ: Կառուցվել է Կիրանց-Ոսկեպար-Բաղանիս սահմանամերձ գյուղերը կապող ավտոճանապարհը:

Գյումրիում ասֆալտապատվել են 8 փողոց և 2 հրապարակ: Կառուցվել է Երևան-Գյումրի ավտոճանապարհի վրա գտնվող Քասախ գետի կամրջի երկրորդ կեսը: Վերակառուցվել է Աբովյան-Աշտարակ ճանապարհի վրա գտնվող Նուռնուսի երկհարկ կամուրջը: Կառուցվել է Արգավանդի տրանսպորտային հանգույցը, որը կարևոր նշանակություն ունի Երևանից դեպի «Զվարթնոց» օդանավակայան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին երթևեկության համար:

Հաշվի առնելով Քըրք Քըրքորյանի՝ Հայաստանի պետականաշինության գործում ունեցած մեր ներդրումը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացվում և առաջարկվում է Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի՝ ներկայում Անաստաս Միկոյանի անունը կրող փողոցը վերանվանել Քըրք Քըրքորյանի անունով:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ